2023-2024 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ
CONCOURS D'ENTREE 2023-2024

Հասարակագիտություն / Sciences sociales

(Իրավաբանական ֆակուլտետ / Faculté de Droit)

Temps imparti / Ժամանակը: 2.5 heures / 2.5 ժամ

Առաջադրանքի կառուցվածքն ու սկզբունքները

Քննական հարցաթերթը բաղկացած է երեք հատվածներից:

1-ին հատվածում (1-60-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր:

2-րդ հատվածում (61-70-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է երկու միավոր:

3-րդ հատվածում (71-75-րդ հարցեր) բաղադրյալ հարցեր են՝ բաղկացած չորս ենթահարցերից: Պահանջվում է աղյուսակի աջ և ձախ սյունակներում տրված հասկացությունների, երևույթների միջև նշել ճիշտ կապերն ու համապատասխանությունները: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասանը՝ չորս միավոր:

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: *Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր:* *Միայն պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի պատասխաններ նշելու դեպքում՝ 0 միավոր:*		
1.	Սահմանադրությունը որպես հիմնական օրենք ունի.	ա/ հիմնադիր և հիմնարար բնույթ բ/ կանխող և դաստիարակող բնույթ գ/ զրկող և պատժող բնույթ դ/ վերականգնող և հատուցող բնույթ
2.	Պաշտպանի մասնակցությունը գործին սկսվում է գործի՝	ա/ նախնական քննության պահից բ/ հետաքննության պահից գ/ դատական նիստը սկսվելու պահից դ/ պաշտպանը չի մասնակցում գործին
3.	Ո՞րն (որո՞նք) է Սահմանադրական	ա/ ապահովում է Սահմանադրության գերակայությունը բ/ ապահովում է մարդու սահմանադրական

	դատարանի դերը պետական մարմինների («հակակշռող և զսպող լիազորությունների» միջոցով) հավասարակշռման իրականացման գործում։	իրավունքների պաշտպանությունը գ/ ապահովում է մարդու բարեկեցությունը դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
4.	Ո՞ր սկզբունքի համաձայն է ամբաստանյալի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված մեղադրող կողմի վրա.	ա/ մեղավորության կանխավարկածի համաձայն բ/ արդարացիության կանխավարկածի համաձայն գ/ անմեղության կանխավարկածի համաձայն դ/ իրավականության կանխավարկածի համաձայն
5.	Պետական գրանցման ենթական են.	ա/ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքները բ/ ոչ գույքային իրավունքից բխող գործարքները գ/ կենցաղային գործարքները դ/ բանավոր պայամավորվածությունները
6.	Ինչպիսի՞ պայմանների դեպքում կարող է կնքվել պայմանագիրը։	ա/ երբ կողմերը համաձայնության են հասնում պայմանագրի բոլոր էական կետերի վերաբերյալ բ/ երբ կողմերի համաձայնությունն իր ձևով համապատասխանում է պայմանագրի ներկայացվող պահանջներին գ/ ցանկացած պայմանագիր համարվում է կնքված միայն նոտարի կողմից վավերացնելու դեպքում դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
7.	Սահմանափակ գործունակ անչափահասը գործարքներ կնքում է.	ա/ ինքնուրույն բ/օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ գ/ դատարանի վճռով դ/ չի կարող գործարք կնքել
8.	Ներկայացված տարբերակներից ո՞րն է հանդիսանում տարածաշրջանային պայմանագիր.	ա/ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966) բ/ Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966) գ/ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության կոնվենցիա (1950) դ/ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր (1789)
9.	Համաձայն ֆրանսիացի փիլիսոփա Պոլ Հոլբախի՝ «Պատերազմն օրինական և անհրաժեշտ է միայն այն ժամանակ».	ա/ երբ վտանգված է ազգի բարեկեցությունը բ/ երբ մղվում է այլ պետության ոչ իրավաչափ գործողությունների դեմ գ/ երբ մղվում է պետության զբաղեցրած տարածքը ընդարձակելու համար դ/ երբ մղվում է որոշակի քաղաքական նպատակների իրագործման համար
10.	Պետությունն օժտված է.	ա/ գերակայությամբ և ինքնիշխանությամբ բ/ հավասարությամբ և մարդասիրությամբ

		գ/ անհակասականությամբ և անկողմնակալությամբ դ/ անսահմանափակ իշխանությամբ
11.	Ըստ անհատների ակտիվության աստիճանի՝ քաղաքական գիտակցության և վարքագծի տեսակ է.	ա/ Սոցիալապես ակտիվ քաղաքական գիտակցությունը և վարքագիծը բ/ հարմարվողական քաղաքական գիտակցությունը և վարքագիծը գ/ օտարված քաղաքական գիտակցությունը և վարքագիծը դ/ բոլոր պատասխանները ճիշտ են
12.	Ու՞մ կողմից մշակվեց ժողովրդավարական սոցիալիզմի գաղափարը.	ա/ Էդուարդ Բեռնշտայնի բ/ Կարլ Մարքսի գ/ Իմանուել Կանտի դ/ Ջոն Քեյնսի
13.	Մասնավոր իրավունք է.	ա/ սահմանադրական իրավունքը բ/ վարչական իրավունքը գ/ քրեական իրավունքը դ/ քաղաքացիական իրավունքը
14.	Ընդհանուր իրավասության դատարանը գործը քննում է.	ա/ միանձնյա բ/ կոլեգիալ՝ հինգ դատավորի կազմով գ/ կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով դ/ պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով
15.	Ներկայացված տարբերակներից ո՞րն ազատականության հիմնական գաղափարներից և սկզբունքներից չէ.	ա/ իշխանությունների բաժանում բ/ համընդհանուր ընտրական իրավունք գ/ հասարակության աստիճանակարգություն դ/ հավասար հնարավորություններ
16.	Ու՞մ է պատկանում այն միտքը, որ պետությունները պետք է ընդունեն «անխախտելի միջազգային սկզբունքներ», որոնք կերաշխավորեն ռազմական հոսպիտալների և բուժանձնակազմի իրավական պաշտպանությունը.	ա/ Ժան Ժակ Ռուսո բ/ Անրի Դյունան գ/ Կարլ ֆոն Կլաուզևից դ/ Թոմաս Հոբսը
17.	ԼՂՀ-ում ե՞րբ է ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և պետական անկախություն հռչակելու հարցով անցկացվել հանրաքվե.	ա/ 1988 թ. փետրվարի 20 բ/ 1989 թ. դեկտեմբերի 1 գ/ 1991 թ. սեպտեմբերի 21 դ/ 1991 թ. դեկտեմբերի 10
18.	Դատավարական ընթացակարգային հարցերը կարգավորում են.	ա/ նյութական նորմերը բ/ ենթաօրենսդրական ակտերը գ/ վարույթային նորմերը. դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
19.	Իրավաչափ վարքագծի համար նախատեսված նորմերը կոչվում են.	ա/ արգելող բ/ իրավապաշտպան գ/իրավունակ դ/ կարգավորիչ

20.	Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն.	ա/ գործին մասնակցող անձինք բ/ դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում գ/ գործի քննությանը չմասնակցած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործը ըստ էության լուծող ակտ դ/ ճիշտ են բոլոր պատասխանները
21.	Հայաստանի առաջին հանրապետությունում պետական կառուցակարգը կազմավորվել է.	ա/ Հայ առաքելական եկեղեցուն հավատարմության սկզբունքով բ/ կենտրոնացման սկզբունքով գ/ բազմակուսակցական քաղաքական համակարգի սկզբունքով դ/ այլախոհության սկզբունքով
22.	Ո՞վ է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հեղինակը.	ա/Ալավիկի որդի Դավիթ բ/ Հովհաննես Օձնեցի գ/ Մխիթար Գոշ դ/ Լիպարիտ Սպարապետ
23.	Մինչև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմումը ներկայացնելը անհրաժեշտ է.	ա/ նախապես դիմել տվյալ երկրի արդարադատության նախարարություն բ/ նախապես դիմել տվյալ երկրի նախագահին գ/ նախապես սպառել ներքին պաշտպանության միջոցները տվյալ պետությունում դ/ չպահպանել վաղեմության ժամկետը
24.	Արցախի նախարարական տան նախահայրը եղել է.	ա/Առանշահիկը բ/ Վաչագան բարեպաշտը գ/ Եսայի Հասան Ջալալյանը դ/ Առանը
25.	Դատարանում գործի քննությունը.	ա/ մրցակցային է բ/ հրապարակային է գ/ համամասնական է դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
26.	Մեղքի ձևերն են.	ա/ ինքնավստահությունը և անտարբերությունը բ/ դիտավորությունը և անզգուշությունը գ/ անտարբերությունը և անզգուշությունը դ/ ինքնավստահությունը և դիտավորությունը
27.	Կողմերի միջև պայմանագիր կնքելու երկրորդ փուլն անվանում են.	ա/ օֆերտա բ/ ակցեպտ գ/ օֆերտանտ դ/ ակցեպտանտ
28.	Գործարքները.	ա/ գիտակցված,նպատակամղված գործողություններ են բ/ չգիտակցված աննպատակա գործողություններ են գ/ տարերային գործողություններ են դ/ ինքնանպատակ գործողություններ են
29.	Նոտարիատը.	ա/ հաստատում է իրավաբանական փաստեր

		բ/ հաստատում է իրավարար փաստեր գ/ հատուկ քաղաքական մարմին է դ/ հատուկ հասարակական մարմին է
30.	Գործարքի հիմքը.	ա/ կամքն է բ/ տրամադրություն է գ/ հարկադրանքն է դ/ պահանջն է
31.	Կախված ծագման հիմքերից պարտավորությունները լինում են.	ա/ պայմանագրային և արտապայմանագրային բ/ պայմանական և արտապայմանական գ/ պատվիրվող և ոչ պատվիրվող դ/ պայմանագրային և պատվիրվող
32.	Որտե՞ղ է տեղակայված Մարդու իրավունքների եվրոպական դատարանը :	ա/ Փարիզում բ/ Հագայում գ/ Ստրասբուրգում դ/ Բեռլինում
33.	Իրավական կարգավորումն իրականացնում է.	ա/ պետությունը բ/ ոստիկանությունը գ/ դատախազությունը դ/ դատարանը
34.	Օրենքների պաշտոնական մեկնաբանությունը ունի.	ա/ իրավարար հետևանքներ բ/ դաստիարակչական հետևանքներ գ/ իրավական հետևանքներ դ/ գիտական հետևանքներ
35.	Դատական իշխանության հատկանիշ չէ.	ա/ անկախությունը բ/ ինքնիշխանությունը գ/ ինքնուրույնությունը դ/ առանձնացվածությունը
36.	Հանրապետության նախագահի, կառավարության և պետական մարմինների ընդունած ակտերը պետք է համապատասխանեն.	ա/ քաղաքացիների մեծամասնության կարծիքին բ/ օրենքներին գ/ ազգային փոքրամասնությունների շահերին դ/ սահմանադրությանը և համապատասխան ոլորտի օրենսգրքին
37.	Ո՞րը միջազգային իրավունքի սկզբունք չէ.	ա/ տարածքային ամբողջականության սկզբունքը բ/ սահմանների անխախտելիության սկզբունքը գ/ պետության և ժողովրդի անվտանգության սկզբունքը դ/ ինքնիշխան հավասարության սկզբունքը
38.	Ներպետական իրավունքը՝ որպես համակարգ, քանի՞սն է.	ա/ որքան պետություն այնքան ներպետական համակարգ բ/ որքան պայմանագիր այնքան ներպետական համակարգ գ/ որքան նորմատիվ իրավական ակտ այնքան համակարգ դ/ մեկն է
39.	Միջազգային իրավական պատասխանատվության,ո՞ր տեսակի դեպքում է իրավախախտ պետությունը տուժած պետությանը հատուցում	ա/ ռեստորացիա բ/ ռետորսիա գ/ ռեպրեսալիա

	պատվի և արժանապատվության վնասը.	դ/ սատիսֆակցիա
40.	Բռնապետական կամ.	ա/ ավտորիտար բ/ տոտալիտար գ/ դիկտատորական դ/ դեսպոտական
41.	Նորմատիվ իրավական ակտում պարունակվում են.	ա/ միայն բարոյա-իրավական նորմեր բ/ միայն իրավունքի նորմեր գ/ միայն քաղաքական նորմեր դ/ միայն հանրային նորմեր
42.	Դիսպոզիցիան.	ա/ հարկադրանք է բ/ ենթադրություն է գ/ կարգադրություն է դ/ բռնություն է
43.	Պետությունների միջազգային վեճերի լուծման գործում գլխավոր դերը խաղում են.	ա/ դատական միջոցները բ/ համաձայնեցնող, հաշտեցնող միջոցները գ/ խորհրդատվության միջոցները դ/ լրատվության միջոցները
44.	Վարչական դատարանի վճիռները.	ա/ վերաքննության ենթակա չեն բ/ վերաքննության ենթակա են գ/ բարդ գործերի վերաքննությունը պարտադիր է դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
45.	Միակողմանի գործարքի տեսակ է.	ա/ առքուվաճառքը բ/ կտակը գ/ ապրանքափոխանակումը դ/ վարձակալությունը
46.	Անգործունակ ճանաչված քաղաքացիներին նշանակվում է.	ա/ հոգաբարձու բ/ խնամակալ գ/ պատրոն դ/ խնամակալ և հոգաբարձու
47.	Ռազմագերիների հետ վարվելակերպիմ ասին համաձայնագիրը.	ա/ Հաագայի 2-րդ համաձայնագիրն է բ/ Հաագայի 3-րդ համաձայնագիրն է գ/ Ժնևի 2-րդ համաձայնագիրն է դ/ Ժնևի 3-րդ համաձայնագիրն է
48.	Սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացուն նշանակվում է.	ա/ հոգաբարձու բ/ խնամակալ գ/ խնամակալ և պատրոնաժ դ/ հոգաբարձու և պատրոնաժ
49.	Աշխատանքային պայմանագրերը ըստ իրենց գործողության ժամկետի լինում են.	ա/ որոշակի և անորոշ ժամկետով բ/ ուղակի և անուղակի ժամկետով գ/ որոշյալ և կարճատև ժամկետով դ/ որոշյալ և որոշակի ժամկետով
50.	Եվրոպական դատարան դիմելիս պետք	ա/ 9 ամսից ոչ ավելի

	է պահպանել վաղեմության ժամկետը՝ պետության կայացրած վերջին որոշման օրից պետք է անցած լինի.	բ/ 1 տարուց ոչ ավելի գ/ 6 ամսից ոչ ավելի դ/ 3 ամսից ոչ ավելի
51.	Պետությունը՝ որպես հանրային իշխանություն,ունի հարկադրանքի կիրառման.	ա/ միասնական իրավունք բ/ համապատասխան իրավունք գ/ օբյեկտիվ իրավունք դ/ մենաշնորհային իրավունք
52.	Հարկադրանքի կիրառման նպատակն է բոլորին ստիպել գործել.	ա/ ի շահ նախագահի և վարչապետի բ/ ի շահ նախագահի և Ազգային ժողովի գ/ ի շահ արդարադատության և դատարանների դ/ ի շահ պետության և հասարակության
53.	Քաղաքացիական իրավունքի սուբյեկտ չէ.	ա/ պետությունը բ/ համանյքը գ/ անչափահասը դ/ բոլորն էլ սուբյեկտ են
54.	Ո՞ր մարմինն է պետության շահերի պաշտպանության հայց հարուցում դատարանում.	ա/ ոստիկանությունը բ/ դատախազությունը գ/ քննիչը դ/ կառավարությունը
55.	Հետաքննության մարմինների ապօրինի գործողություններով պատճառված վնասի հատուցումը կատարում է.	ա/ Գլխավոր դատախազը բ/ Ոստիկանությունը գ/ Դատախազությունը դ/ Պետությունը
56.	Պարտավորության կատարման լրացուցիչ եղանակ է.	ա/ նորացումը բ/ երաշխիքը գ/ հրաժարագինը դ/ հաշվանցումը
57.	Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավորների քանակը.	ա/ որոշվում է անդամ երկրներից յուրաքանչյուրի բնակչության թվի հիման վրա բ/ յուրաքանչյուր տարի փոխվում է՝ կախված լսվող գործերի քանակից գ/ հավասար է համաձայնագրի մասնակից պետությունների՝ Եվրոպայի խորհրդի անդամների քանակին դ/ հավասար է եվրոպայի բոլոր երկրների քանակին
58.	Թուրքիան հաստատեց «Հայոց ազգային սահմանադրությունը».	ա/ 1863թ. բ/ 1853թ. գ/ 1873թ. դ/ 1913թ.
59.	Իրավաստեղծագործությանը հաջորդում է.	ա/ իրավապահպան գործողությունը բ/ իրավաստեղծ գործողությունը գ/ իրավակիրառ գործողությունը

		դ/ իրավաչափ գործողությունը
60.	Արդի պետության կառույցակարգի սկզբունքներից չէ.	ա/ ժողովրդաիշխանությունը բ/ օրինականությունը գ/ օրենքականությունը դ/ արհեստավարժությունը

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը:
Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը՝ 2 միավոր:
Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0 միավոր:

61.	Քաղաքացիական իրավունքը կարգավորում է.	ա/ գույքային և անձնական ոչ գույքային հարաբերություններ բ/ բոլոր հասարակական հարաբերությունները գ/ պետության և հանցանք կատարած անձի միջև ծագող հարաբերությունները դ/ քաղաքական հարաբերությունները
62.	Միջազգային մարդասիրական իրավունքը՝	ա/ չի արգելում, բայց և չի խրախուսում պատերազմը բ/ չի խրախուսում և արգելում է պատերազմը գ/ խրախուսում է և չի արգելում պատերազմը դ/ կտրականապես արգելում է պատերազմը
63.	Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի որակ չէ.	ա/ անօտարելիությունը բ/ պարտադիր լինելը գ/ անվիճարկելիությունը դ/ բացառիկությունը
64.	Ներկայացված տարբերակներից ո՞րն է սխալ։	ա/ Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ բ/ Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն աշխատողի իրավաբանական անձի կարգավիճակ ունենալու կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված լինելու հանգամանքը գ/ Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը դ/ Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները
65.	Օրենքները իրենց բովանդակությամբ պետք է համապատասխանեն.	ա/ Արդարության, իրավահավասարության, մարդասիրության, ազատության սկզբունքներին բ/ Արդարության, ազատության, միասնության, հավասարության սկզբունքներին գ/Համերաշխության, հավասարության, մարդասիրության, ազատության սկզբունքներին դ/ Եղբայրության, հավասարության, արդարության, մարդասիրության սկզբունքներին
66.	Ո՞վ է «Գիրք	ա/ Լիպարիտ սպարապետ,1184 թթ.

	դատաստանի» աշխատության հեղինակը, և ե՞րբ է այն հրատարակվել.	բ/ Լիպարիտ Սպարապետ,1150 թթ. գ/ Մխիթար Գոշ,1184 թթ. դ/ Մխիթար Գոշ,1150 թթ.
67.	Ո՞վ է «Օրենքների ոգու մասին» աշխատության հեղինակը, և ե՞րբ է այն հրատարակվել.	ա/ Ժան Բոդեն,1566թ. բ/ Ժան Բոդեն,1748թ. գ/ Շարլ Մոնտեսքիո,1948թ. դ/ Շարլ Մոնտեսքիո,1748թ.
68.	Վճռաբեկ դատարանում բեկանված վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտը վարչական դատարանում քննվում է.	ա/ կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով բ/ միանձնյա գ/ կոլեգիալ՝ հինգ դատավորի կազմով դ/ պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով
69.	Օրենքները իրենց բովանդակությամբ պետք է համապատասխանեն.	ա/ Արդարության, իրավահավասարության, մարդասիրության, ազատության սկզբունքներին բ/ Արդարության, ազատության, միասնության, հավասարության սկզբունքներին գ/ Համերաշխության, հավասարության, մարդասիրության, ազատության սկզբունքներին դ/ Եղբայրության, հավասարության, արդարության, մարդասիրության սկզբունքներին
70.	Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ.	ա/ Ֆրանսիացի Ժան Բոդենն իր «Պատմության աշխարհագրական առանցքը» գրքում բացատրում է բնակչության, պետության, նրա քաղաքականության և բնական միջավայրի միջև կապը բ/ «Օրենքներ ոգու մասին» աշխատությունը և «Աստրախանի հայերի դատաստանագիրքը» թվագրվում են նույն թվականին՝ 1748: գ/ Ալֆրեդ Մեխենը առավելություն է տալիս պետության ծովային դիրքին: դ/ Մեծ տարածքների գաղափարի հեղինակը Հելֆորդ Մաքինդերն է:

Չորս բաղադրիչով հարց-առաջադրանքներ
Գտնել ճիշտ կապերն ու համապատասխանությունները աջ և ձախ սյուներում տրված հասկացությունների, երևույթների միջև: Պատասխանները գրանցել առաջադրանքից հետո զետեղված աղյուսակում՝ համապատասխան թվի տակ նշելով ճիշտ պատասխանի տառը: Պատասխանի ներկայացման այլ տարբերակները չեն գնահատվելու: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասխանը՝ չորս միավոր:

71. Համապատասխանեցնել ենթաօրենսդրական ակտերը.

1. Ընդհանուր	ա/ նախարարության հրահանգ
2. Ներկազմակերպական	բ/ Կառավարության որոշում
3. Գերատեսչական	գ/ ՏԻՄ–ի նորմատիվ իրավական ակտ
4. Տեղական	դ/ դպրոցի տնօրենի հրաման

1	2	3	4

72. Համապատասխանեցնել արդի հանրապետությունների տեսակները հատկանիշներին .

1. Կառավարությունը կազմում է նախագահը, այն հաշվետու է նրա առջև	ա/ խորհրդարանական
2. Պետական կառուցակարգը կազմավորվում է կենտրոնացման սկզբունք	բ/ նախագահական
3. Նախագահը կազմում է Կառավարություն,որը հաշվետու է նաև խորհրդարանին	գ/ խառը
4. Խորհրդարանը կազմում է Կառավարություն, որը հաշվետու է նրա առջև	դ/ Սոցիալիստական

1	2	3	4

73. Համապատասխանեցնել գաղափարական հոսանքները դրանք ներկայացնող հեղինակներին.

1. «Նոր կամ սոցիալական ազատականություն»	ա/ Շ. Մոնտեսքիո
2. «Սոցիալ–ժողովրդավարություն»	բ/ Է. Բեռնշտայն
3. «Ժողովրդավարական սոցիալիզմ»	գ/ Ջ. Քեյնս
4. «Լիբերալիզմ»	դ/ Կ. Մարքս

1	2	3	4

74. Համապատասխանեցնել հասկացությունները՝ դրանք բնութագրող հատկանիշներին

1.Պետություն	ա/ Անկախություն և իրավահավասարություն այլ պետությունների հետ հարաբերություններում:
2. Պետական իշխանություն	բ/ Գերակայությամբ օժտված քաղաքական հատուկ կազմակերպություն:
3.Ներքին ինքնիշխանություն	գ/ Իրականացվում է իրազեկման, համոզման և իրավական հարկադրանքի եղանակներով:
4.Արտաքին ինքնիշխանություն	դ/ Պետության մենաշնորհային իրավունք՝ երկրում իրականացնել օրենսդիր, գործադիր և իրավապահպան գործառույթներ

1	2	3	4

75. Համապատասխանեցնել իրավունքի աղբյուրները.

1. Մահմեդական երկրներում առավել տարածված է	ա/ նորմատիվ իրավական ակտը
2. ՀՀ–ում իրավունքի հիմնական աղբյուրն է	բ/ նախադեպային իրավունքը
3. Անգլո–սաքսոնական երկրների իրավական համակարգին բնորոշ է որպես իրավունքի աղբյուր	գ/ սովորույթը
4. Հնագույն ժամանակներում հասարակական կյանքի կարգավորում էր	դ/ «Շարիաթը»

1	2	3	4